ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության 2018-2019 թթ. պետական բյուջեների եկամուտների վերաբերյալ (հունվար-նոյեմբեր)

<< 2019 թվականի պետական բյուջեի եկամուտները (մլրդ դրամ)



<< 2018-2019թթ. պետական բյուջեների եկամուտները (մլրդ դրամ)







<< 2019 թ. պետական բյուջեի հունվար-նոյեմբեր ամիսների եկամուտները կազմել են **1,397.9** մլրդ դրամ, որը 2019թ. պետական բյուջեի տարեկան հաստատված ծրագրային ցուցանիշի **93.4%**-ն է, կամ տարեկան ճշտված ծրագրային ցուցանիշի **80.6%**-ը: Պետական բյուջեի հունվար-նոյեմբերի եկամուտները **220.6 մլրդ դրամով**, կամ **18.7%**-ով ավելի են 2018թ. հունվար-նոյեմբերի եկամուտներից:

Հարկային եկամուտները և պետական տուրքերը 2019թ. հունվար-նոյեմբերին կազմել են **1,314.1** մլրդ դրամ, որը 2019թ. պետական բյուջեի տարեկան հաստատված ծրագրային ցուցանիշի **93.7%**-ն է, իսկ տարեկան ճշտված ծրագրային ցուցանիշի՝ 81.7%-ը: Հարկային եկամուտները և պետական տուրքերը **գերազանցում են** 2018 թվականի փաստացի ցուցանիշին **210.0 մլրդ** դրամով, կամ **19.0%**-ով:

Պաշտոնական դրամաշնորհները 2019թ. հունվար-նոյեմբերին կազմել են **10.0** մլրդ դրամ, որը 2019թ. պետական բյուջեի տարեկան հաստատված ծրագրային ցուցանիշի 25.3%-ն է, իսկ տարեկան ճշտված ծրագրային ցուցանիշի 24.9%-ը: 2019թ. հունվար-նոյեմբերի պաշտոնական դրամաշնորհները 2018թ. հունվար-նոյեմբերի համեմատությամբ ավել են **1.8** մլրդ դրամով, կամ **22.0%**-ով:

Պետական բյուջեի այլ եկամուտները 2019թ. հունվար-նոյեմբերին կազմել են **73.7 մլրդ** դրամ, որը 2019թ. պետական բյուջեի տարեկան հաստատված ծրագրային ցուցանիշի **133.8%**-ն է, կամ **ավել է 18.6 մլրդ** դրամով, իսկ տարեկան ճշտված ծրագրային ցուցանիշի նկատմամբ կատարողականը կազմել է **99.3%**: Այլ եկամուտները 2018թ. հունվար-նոյեմբերի համեմատությամբ ավել են **8.7** մլրդ դրամով կամ **13.4%**-ով:

Պետական բյուջեի եկամուտները ավելացված արժեքի հարկի գծով 2019թ. հունվար-նոյեմբերին կազմել են 467.6 մլրդ դրամ, ինչը 2018թ. հունվար-նոյեմբերի համեմատությամբ ավելի է՝ **77.2 մլրդ** դրամով, կամ **28.8%**-ով:

Ակցիզային հարկի գծով եկամուտները 2019թ. հունվար-նոյեմբերին կազմել են 121.2 մլրդ դրամ, ինչն ի տարբերություն 2018թ. հունվար-նոյեմբերի ավել է **25.0** մլրդ դրամով կամ **26.0%**-ով: Հատկանշական է, որ հանրապետություն ներմուծվող ենթակացիզային ապրանքների հարկումից եկամուտները կազմել են 50.0 մլրդ դրամ, կամ 2018թ. հունվար-նոյեմբերի համեմատ՝ 9.6 մլրդ դրամով ավել, իսկ հանրապետությունում արտադրվող ենթակացիզային ապրանքների հարկումից 2019թ. հունվար-նոյեմբերին ստացվել է **71.0 մլրդ դրամ**, ինչը 2018թ. համեմատությամբ ավել է **15.5** մլրդ դրամով կամ 27.9%-ով:

2019 թվականի հունվար-նոյեմբեր ամիսների ընթացքում շահութահարկի և բնապահպանական ու բնօգտագործման վճարների ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 207.8 և 51.8 մլրդ դրամ, իսկ 2018 թվականին համապատասխանաբար 136.2 և 45.0 մլրդ դրամ: Այսինքն, շահութահարկի գծով եկամուտների ցուցանիշը 2019թ.-ին 2018թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ **աճել է 71.6 մլրդ** դրամով, կամ **52.6 %**-ով, իսկ բնապահպանական ու բնօգտագործման վճարների ցուցանիշը՝ 6.8 մլրդ դրամով, կամ 15.1%-ով:

Եկամտային հարկի գծով 2019թ. հունվար-նոյեմբերին արձանագրվել է 404.8 մլրդ դրամի եկամուտ, ինչը 2018թ. հունվար-նոյեմբերի համեմատությամբ **ավել է 84.5 մլրդ** դրամով կամ **26.4%**-ով:

Մաքսատուրքերի գծով եկամուտները 2019թ. հունվար-նոյեմբերին կազմել են **85.0 մլրդ դրամ**, ինչը 2018թ. հունվար-նոյեմբերի համեմատությամբ **աճել է 11.7 մլրդ դրամով** կամ 16.0%-ով:

Շրջանառության հարկի գծով 2019թ. հունվար-նոյեմբերին արձանագրվել է **31.3 մլրդ** դրամի եկամուտ՝ 2018թ. հունվար-նոյեմբերի 21.1 մլրդ դրամի դիմաց: **Աճը կազմել է 48.3% կամ 10.2 մլրդ դրամ**:

Սոցիալական վճարների գծով առկա է **շուրջ 1.0 մլրդ դրամի աճ**, 2019թ. հունվար-նոյեմբերին արձանագրվել է **17.0 մլրդ** դրամի եկամուտ, 2018թ. հունվար-նոյեմբերի **16.0 մլրդ** դրամի դիմաց:

2019թ. հունվար-նոյեմբերին պետական տուրքերի գծով եկամուտները կազմել են 39.6 մլրդ դրամ, ինչը 2018թ. հունվար-նոյեմբերի համեմատությամբ **ավել է 6.4 մլրդ** դրամով, կամ **19.3%**-ով:

Այլ հարկային եկամուտների գծով 2019թ. հունվար-նոյեմբերին արձանագրվել է 24.8 մլրդ դրամ եկամուտ, ինչը 2018թ. համեմատությամբ **ավել է 0.3 մլրդ** դրամով:

2019 թվականի հունվար-նոյեմբերին տնտեսավարողների կողմից վճարված գերավճարների վերադարձի և այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցված գումարները կազմել են 136.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա շուրջ 55.3 մլրդ դրամի դիմաց: